

ՀՀ Վայոց ձորի մարզի պատվիրակությունը՝ ՌԴ Արխանգելսկի մարզում

19.06.2013



Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության տարածքային միավորների միջազգային համագործակցության շրջանակներում Ռուսաստանի Դաշնության Արխանգելսկի մարզում է ՀՀ Վայոց ձորի մարզի պատվիրակությունը, մարզպետ Էդգար Ղազարյանի գլխավորությամբ:

Օրակարգում են ռուս-հայկական համագործակցությանը վերաբերող և երկու երկրների տարածաշրջանների միջև գործակցության արդյունավետ ուղիների նախանշման հարցերը: Հանդիպումները և քննարկումները վկայում են, որ առկա են բավական նպաստավոր նախադրյալներ՝ արդյունավետ իրականացնելու ինչպես տնտեսական համատեղ ծրագրեր, այնպես էլ՝ կենսագործելու համատեղ նախագծեր երիտասարդական տուրիզմի, առողջարանային հանգստի և այլ բնագավառներում:

2013թ. հունիսի 16-19-ը ՌԴ Արխանգելսկի մարզում էր ՀՀ Վայոց ձորի մարզպետ Է.Ղազարյանի գլխավորած պատվիրակությունը

21.06.2013



2012թ. հոկտեմբերի 13-ին հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովի ընթացքում ՀՀ Վայոց ձորի և ՌԴ Արխանգելսկի մարզերի միջև ստորագրված համագործակցության համաձայնագրի շրջանակում Արխանգելսկի նահանգապետ Ի.Ա.Օրլովի 2013թ. մայիսի 12-ի պաշտոնական հրավերով 2013թ. հունիսի 16-19-ը ՌԴ Արխանգելսկի մարզում էր ՀՀ Վայոց ձորի մարզպետ Է.Ղազարյանի գլխավորած պատվիրակությունը՝ Արխանգելսկում կազմակերպվող զբոսաշրջության երկրորդ միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով:

Պատվիրակության կազմում էին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ. Խուդավերդյանը, <<Մեծ Սյունիք>> ՍՊԸ-ի նախագահ Վ. Մաթևոսյանը, <<Արմենիա>> առողջարանի գործադիր տնօրեն Հ. Գրիգորյանը, <<Օլիմպիա>> առողջարանի գործադիր տնօրեն Ս. Մարգարյանը:

Այցի շրջանակներում ստորագրվել է 2013-2014թթ. համար համագործակցության միջոցառումների պլանը /ծրագիրը/, քննարկել են նաև համագործակցության ոլորտներին առնչվող այլ հարցեր:

Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ:

Հունիսի 17-ին նահանգապետ Ի.Ա. Օրլովը Արխանգելսկի կառավարության շենքում ընդունել է Վայոց ձորի մարզպետի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպումներ են տեղի ունել նաև Վայոց ձորի պատվիրակության և Արխանգելսկի կառավարության անդամների միջև, մասնավորապես՝ Էկոնոմիկայի և առևտրի նախարարի տեղակալ Ի.Բ.Բաժենովայի, տնտեսական զարգացման և մրցակցային քաղաքականության նախարար Ի.Վ. Գլադիշևայի, Արխանգելսկի մարզի առողջապահության նախարար Լ.Ի.Մենշիկովայի Արխանգելսկի մարզի անտառարդյունաբերական համալիրի և բնական պաշարների նախարար Ս.Վ. Շեբելյովի, մշակույթի նախարար Լ.Ե. Վոստրյակովի, ՌԴ դաշնային ժողովի դաշնային խորհրդի անդամ Ի.Վ. Ֆոմինի, Արխանգելսկի մարզի երկու տասնյակից ավելի առևտրական կազմակերպությունների և գործարար աշխարհի ներկայացուցիչների, զբոսաշրջային կազմակերպությունների ղեկավարների, Արխանգելսկի մարզի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Տեղի են ունեցել քննարկումներ նահագապետ ԻԱ Օրլովի հետ՝ երկու մարզերի համագործակցության շուրջ: Այնուհետև Արխանգելսկի կառավարության և Վայոց ձորի պատվիրակության ներկայությամբ տեղի է ունեցել 2013-2014 թթ.

համագործակցության միջոցառումների պլանի ստորագրումը, որից հետո ոլորտային հանդիպումներ են եղել Վայոց ձորի պատվիրակության և Արխանգելսկի կառավարության անդամների միջև, մասնավորապես՝ Էկոնոմիկայի և առևտրի նախարարի տեղակալ Ի. Բ. Բաժենովան և Վայոց ձորի պատվիրակության անդամները քննարկվել են արտահանումների հետ կապված խնդիրներ, մասնավորապես՝ Վայոց ձորից միրգ և գինիներ արտահանելու հնարավոր տարբերակների հետ կապված հարցեր:

Հանդիպումներին ներկա են եղել Արխանգելսկի մարզի երկու տասնյակից ավելի առևտրական կազմակերպությունների և գործարար աշխարհի ներկայացուցիչներ:

Հանդիպումից հետո տեղի են ունեցել Վայոց ձորի մարզից վերոնշյալ արտադրատեսակների համտես և գործարար քննարկումներ: Ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ:

Հանդիպում է տեղի ունեցել Արխանգելսկի մարզի անտառարդյունաբերական համալիրի և բնական պաշարների նախարար Ս.Վ. Շեբելյովի հետ: Քննարկվել են Վայոց ձորի մարզ փայտանյութի ներկրման հնարավորությունները, իսկ առողջապահության նախարար Լ.Ի.Մենշիկովայի հետ հանդիպմանը քննարկվել են

հնարավոր համագործակցությանը վերաբերող հարցեր, մասնավորապես՝ բժիշկների փոխանակման, վերապատրաստման վերաբերյալ, ինչպես նաև Ջերմուկ առողջարանային քաղաքի հնարավորությունների օգտագործման հարցերը՝ որպես առողջության վերականգնման յուրօրինակ կենտրոնի:

Հանդիպում է տեղի ունեցել Արխանգելսկի մարզի մշակույթի նախարար Լ.Ե.

Վոստրյակովի հետ, որի ընթացքում քննարկվել են մշակութային խմբերի փոխանակման, Վայոց ձորի և Արխանգելսկի մարզերի գրադարաններում փոխադարձաբար հայ և ռուս գրականության անկյուններ ունենալու, Վայոց ձորի մարզում Մ.Վ. Լոմոնոսովի անվամբ որևէ դպրոց անվանակոչելու, Արխանգելսկի մարզում հայ նշանավոր մարդկանցից մեկի անունով դպրոց անվանակոչելու հնարավորությունները, որն ավելի կամրապնդի երկու ժողովուրդների ավանդական բարեկամությունը: Քննարկվել են նաև Արխանգելսկի մարզում հայաստանյան օրեր կազմակերպելու հնարավորությունները:

Պատվիրակությունը մասնակցել է Արխանգելսկյան զբոսաշրջության երկրորդ միջազգային համաժողովին, որին մասնակցից են եղել 12 պետությունների ներկայացուցիչներ: Համաժողովի մասնակիցներին ողջունել է նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետ Է. Ղազարյանը: Համաժողովի ընթացքում պատվիրակությունը հանդիպել է զբոսաշրջային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ներկայացվել են Վայոց ձորի մարզի զբոսաշրջային և Ջերմուկ քաղաքի առողջարանային բուժման, առողջության վերականգնման, հնարավորությունները:

Մարզպետը հանդիպել է նաև ՌԴ-ի դաշնային ժողովի դաշնային խորհրդի անդամ Ի.Վ. Ֆոմինի հետ, որի ընթացքում քննարկվել են զբոսաշրջության զարգացման հարցեր:

Հանդիպումներ են տեղի ունեցել նաև հայ համայնքի ներկայացուցիչների հետ, ներկայացվել են Վայոց ձորի մարզի հնարավորությունները, համագործակցության հնարավոր ուղիները: Հայ համայնքը պատրաստակամություն է հայտնել աջակցելու համագործակցության զարգացմանը:

Պայմանավորվածություններ են ձեռք բերվել Արխանգելսկի մարզի մի շարք ընկերությունների հետ, Վայոց ձորից գինի, մրգեր, չրեր, արտահանելու և զբոսաշրջության ոլորտում համագործակցելու նպատակով

Հունիսի 19-ին պատվիրակությունն ավարտել է աշխատանքները և վերադարձել Հայաստան: